

2016թ. խոշոր հարկ վճարողների մոնիտորինգի ամփոփ ցուցանիշների վերլուծություն

Սույն վերլուծությունը իրականացվում է այն 522 հարկ վճարողների ամփոփ ցուցանիշների հիման վրա, որոնք ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրամանով ընդգրկված են Խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության կողմից 2016թ.-ի ընթացքում սպասարկվող հարկ վճարողների ցանկում:

Խոշոր հարկ վճարողների մոնիտորինգի ամփոփ ցուցանիշների համեմատական վերլուծությունը իրականացվում է նույն 522 հարկ վճարողների 2016 և 2015 թվականների փաստացի տվյալների հիման վրա:

2016թ. երրորդ եռամսյակի ամփոփ ցուցանիշների վերլուծության հիման վրա կարելի է փաստել, որ

1. Իրացումից հասույթը կազմել է 997.1 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատությամբ նվազելով 4.8%-ով:
2. Ներմուծման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ նվազել են 9.5 %-ով և կազմել 177.4 մլրդ դրամ:
3. Արտահանման ծավալները աճել են 8.5%-ով և կազմել 144.2 մլրդ դրամ:
4. Վճարված մաքսային վճարների ցուցանիշի առումով 2016թ.-ի երրորդ եռամսյակում խոշոր հարկ վճարողների կողմից վճարվել է շուրջ 36.2 մլրդ. դրամ, որից ԱԱՀ-ն կազմել է 26.1 մլրդ դրամ:
5. Պետական բյուջե վճարված հարկերի և այլ պարտադիր վճարների ցուցանիշի առումով 2016թ.-ի երրորդ եռամսյակում խոշոր հարկ վճարողների կողմից վճարվել է շուրջ 112.4 մլրդ. դրամ: Ընդ որում, նշված կազմակերպությունների կողմից 2016թ.-ի երրորդ եռամսյակում վճարվել է հանրապետությունում հավաքագրված հարկային եկամուտների 54.0%-ը:
6. Հարկային մարմնի կողմից կատարվել են 162 հարկային ստուգումներ, այդ թվում բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության 72 ստուգումներ, որոնց արդյունքում առաջադրվել է բյուջե լրացուցիչ վճարման ենթակա գումարներ 4.3 մլրդ. դրամի չափով:
7. 01.10.2016թ.-ի դրությամբ խոշոր հարկ վճարողներն ունեցել են 144.4 մլրդ դրամ գերավճար, այդ թվում՝ ավելացված արժեքի հարկի գծով՝ 88.4 մլրդ դրամ, իսկ հարկային պարտավորություն՝ 21.9 մլրդ դրամ: Նշված ժամանակահատվածում պետական բյուջեից հարկ վճարողների

գերավճարների գումարներից ավելացված արժեքի հարկի վերադարձի ձևակերպում է կատարվել 9.9 մլրդ դրամի չափով, իսկ գերավճարների գումարներից այլ հարկատեսակների գծով հաշվանցվել է 3.6 մլրդ դրամի չափով:

8. Աշխատողների միջին ցուցակային թիվը դիտարկվող ժամանակահատվածում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ նվազել է 1.0%-ով, իսկ մեկ աշխատողի միջին ամսական ԱՎՈՒՄ-ը աճել է 2% -ով և կազմել 224 հազար դրամ: